ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/55

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.05.2018թ. թիվ 03/26-3/8926-18 գրությամբ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.05.2018թ. թիվ ԴՎԱ/1707 գրության հիման վրա, 18.05.2018թ. «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.05.2018թ. թիվ ԴՎԱ/1707 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ն 66-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սակայն կազմակերպության տնօրենը գրությամբ դիմել է գնահատող հանձնաժողովին, խնդրելով վերոնշյալ չափաբաժնի գնային առաջարկը անվավեր համարել:

Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «գ» կետը, որոշեԼ Է «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի հայտը այդ չափաբաժնի մասով մերժել:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ն 11.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով մեր ներկայացված գնային առաջարկը պետք է մերժվեր դեռևս ՀՀ պաշտպանության նախարարության հանձնաժողովի նիստում, քանի որ գնային առաջարկի 4-րդ աղյուսակում գումարը չի լրացվել՝ ո՛չ տառերով, ո՛չ թվերով (ինչպես որ պահանջում է օրինակելի ձևի լրացման կարգը), այլ ընդհակառակը համարվել է բավարար և առաջացրել վիճակահարույց իրավիճակ:

Այսպիսով «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմվել է ՀՀ օրենսդրության խախտումներով, ինչի արդյունքում պետք է Ընկերության հայտը մերժվեր ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի կողմից և «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու կարիք չէր լինի:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի տնօրեն Վիտալի Ասլանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/55 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2018թ. թիվ 03/26-3/8926-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.05.2018թ. թիվ ԴՎԱ/1707 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի կողմից 11.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի կողմից 03.04.2018թ. Պատվիրատուին ուղղված գրությունը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը 03.04.2018թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը՝

«Մեր ներկայացված գնային առաջարկի 66-րդ չափաբաժնի արժեքի փոխարեն սխալմամբ ներկայացվել է տպաքանակի թիվը, որի արդյունքում ստացվում է, որ մենք պետք է տպագրենք 1540 մատյան, հատը 1 դրամով: Խնդրում ենք այդ չափաբաժնի առաջարկը անվավեր համարել, քանի որ մեր կազմակերպությունը գտնվելով ծանր ֆինանսական պայմաններում, չի կարողանալու կատարել այդ աշխատանքը»:

Հանձնաժողովը 09.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2.3-րդ կետով արձանագրել է, որ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):
- 3.2-րդ կետով արձանագրել է, որ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի տնօրենի կողմից գնահատող հանձնաժողովին ուղղված գրության համաձայն մասնակիցը հրաժարվել է 66-րդ չափաբաժնով ներկայացված գնային առաջարկից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից այդ չափաբաժնի մասով մասնակցի հայտը մերժվեց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:
- 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված

արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 5-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է տառերով և թվերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. մայիսի 24-ի N 237-Ա հրամանով հաստատված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 5-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է թվերով և տառերով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի կողմից մրցույթի 66-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն:

Ներկայացված հայտի գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը լրացված չէ թվերով և տառերով:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. մայիսի 24-ի N 237-Ա հրամանով հաստատված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 4-րդ հավելվածով նախատեսված պահանջներին, հետևաբար, այն պետք է մերժվեր Հանձնաժողովի կողմից, ինչի արդյունքում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ի հայտը Հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան գնահատելով ՝ գործել է ոչ իրավաչափ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2018թ. թիվ 03/26-3/8926-18 գրությամբ «Լուսաբաց հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ